

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանի ուղերձը Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ. 03.12.2015



Միրելի բարեկամներ:

Ամեն տարի դեկտեմբերի 3-ը նշվում է որպես Հաշմանդամների միջազգային օր: Օրվա խորհուրդը մեզանից յուրաքանչյուրին հիշեցնում է, որ մեր կողքին ապրում են նույն իրավունքներն ունեցող, սակայն սահմանափակ կարողություններով անձիք, որոնց համար մատչելի միջավայր, հավասար պայմաններ և իրավունքների իրացման հնարավորություններ ստեղծելու համար աշխարհի առաջադեմ մարդկությունը, բազմաթիվ պետություններ, միջազգային ու հասարակական կազմակերպություններ անում են հնարավոր ամենը, սակայն ցանկալի արդյունքի հասնելու համար դեռևս երկար ճանապարհ կա անցնելու: Հաշմանդամների միջազգային օրը ևս մեկ առիթ է իմի բերելու կատարված աշխատանքները, գնահատելու դրանց արդյունքում մարզի հասարակական կյանքին, ինչպես նաև տնտեսական գործունեության ոլորտում հաշմանդամների հնարավոր ներգրավումն ապահովելու պայմանների առկա վիճակը: Այս ուղղությամբ իհարկե բավականին աշխատանք է կատարվել նաև Վայոց ձորի մարզում, թեկուզ դեռևս լուծվելիք բազմաթիվ խնդիրներ կան:

Թույլ տվեք նշել, որ ֆիզիկապես մատչելի միջավայրի ստեղծումից ոչ պակաս կարևոր է սահմանափակ կարողություններով անձանց շուրջ բարոյահոգեբանական միջավայրի ձևավորումը, նրանց նկատմամբ հանրության վերաբերմունքի արմատական վերափոխումը: Համոզված եմ, որ ցանկալի արդյունքի մենք հասնելու ենք մարզային կառույցների, հասարակական կազմակերպությունների, բարեհոգի վայոցձորցիների համախմբված աշխատանքի միջոցով: Իմ գոհունակությունն էմ հայտնում Վայոց ձորի մարզի հաշմանդամների խնդրով մտահոգ բոլոր անձանց և կազմակերպություններին, իրենց Աստվածահաճո գործունեության համար: Հարգելիներս, ձեզ առավել մեծ եռանդ և ուժ՝ երախտագիտության արժանի ձեր ձեռնարկներում:

Իսկ դուք՝ սահմանափակ կարողություններով իմ սիրելի բարեկամներ, համոզված եղեք, որ մարզային իշխանությունների նպատակն է ստեղծել պայմաններ, որ լիովին պաշտպանված լինեն ձեր իրավունքները, որպեսզի դուք ակտիվ մասնակցություն ունենաք մեր մարզի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն և կյանքի վայելքներին մասնակցության հնարավորություններ: Ձեր հոգիներին՝ խաղաղություն, ընտանիքներին՝ աժանավայել կեցություն: